160ч

# Ձորագես

891·99
Ի-64

891.99
Խ-64
Ն.Ա.
19 NOV 2011

ԽՆԿՈ ԱՊԵՐ

# ՁՈՐԱԳԵՍ

1602

ՊԱՐԻԶ
1934
Տպագր. ՊԱՀՐԻ Եղբարց

1 3 MAY 2013

34711

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

8879-56



ԽՆԿՈ ԱՊԵՐ

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ

Ձորագեսի հարվածային բան-վորներին եւ գործին ղեկավար գըլ-խավոր ճարտարագետ՝

Հովսեփ Տեր-Աստվածատրյանին

Խ. Ա.



ՀՈՎՍԵՓ ՏԵՐ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Գլխավոր ճարտարագետ եւ ղե-
կավար Ջորագեսի աշխատանք-
ների ։



# ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

*Ջրագեսի սկզբնական կառուցվածքը:*

Յերե՛կ, այսօ՛ր,
Այսօ՛ր, յերե՛կ,
Մի չորս տարի
Այսպես մեկ–մեկ,
Մի չորս տարի
Գիշեր, ցերեկ,
Բանվոր, վարպետ,
Ճ ա ր տ ա ր ա պ ե տ
Միշտ թեվ–թևի,
Միշտ իրար հետ,
Հա դուրս գալով
Բնության դեմ
Մեծ պայքարի,



*Ձորագեսի գլանակ փականքը:*





*Ձորագեսի ջրամբարի փականները:*

Լոռու ձորը
Խոր ճանդեցինք,
Ձ ո ր ա գ ե ս ը
Պինդ քանդեցինք:

Նախ շինեցինք
Դեմն ամբարտակ,
Գետին տվինք
Նոր հուն, հատակ:

Առաջ բերինք,
Գործի դրինք
Շատ, շատ մաշին –



*Մեքենայական դահլիճ՝ Ա. եւ Բ գեներատորներ:*

Ջուր կտրատող,
Որ թափանցող,
Որ ներշնչող,
Ցեմենտ ծեփող,
Բետոն հունցող,
Ջուր, հող, ավազ
Արտափորող,
Վերեվ տանող —

Վագոնիկներ՝
Հող, քար, ավազ
Տանող, թափող,
Վ ե ր ա դ ա ր ձ ո ղ



Ես բոլորը՝
Շար–շար մաշին,
Ես բոլորը՝
Անիվ, Փոկ, շին,
Ես բոլորը՝
Դրինք քանի,
ԲԱՆՈՒԺԻ դեմ
Ժայռն ի՞նչ անի:

Բոմբ, դինամիտ,
Պատրույգ, վառող ...
Ժայռի կրծքում,
Պեղում, պեղում ...
Ուժ, ուժի դեմ
Բախում, բախում ...
Ժայռի կրծքում
Տվինք լաղում:



*Մեքենայական դահլիճ՝ ուժեղացնող տրանսֆորմատոր:*

Հե՛յ, ԲԱՆՎՈՐՆԵ՛Ր,
Ջլոտ կռներ,
Քար, — ապառաժ
Ժայռից ել ժայռ,

Հե՛յ, ԲԱՆՎՈՐՆԵՐ,
Հին աշխարհի
Աչքը հանող,
Հինը քանդող,
Նորը կերտող,
Նոր աշխարհի,
ՇԻՆԱՐԱՐՆԵՐ,

Զարկե՛ք, զարկե՛նք
Մին ել, մին ել,
Հարյուր մին ել,
Հազար մին ել,



*Մեքենայական դահլիճ՝ սեփական կարիքների համար վահան:*





*Փակ-բաժանմունքի կառուցվածքը 22.000 վոլտի:*



Զարկե՛ք, չափով,
Զարկե՛ք թափով
Զարկե՛ք, զարկե՛նք
Քար–ապառաժ,
Ժայռի կրծքով
Տանենք թռնել:

Ցերկու, յերեք,
Կ ի լ ո մ ե տ ր
Քար–ապառաժ
Ժայռում փորած
Եղ. թռնելով
Գետն իր հունից
Վեր հանելով՝
Ցած կախեցինք

ՂԱՁԱՂԱՆԻ
Բարձր ժայռից,
Տվինք նրան
Թափ, յելեվեջ. —

Գետը ժայռից
Կուտակ–կուտակ,
Գլխաքավալ
Գնաց լցվեց
Տուրբինի մեջ:

Յեվ ուղղաձիգ
Նեղ տուրբինով
Նետվեց ներքեվ
Ոձասլաց,
Փրփրակալած —



22.000 վոլտի նախասենյակը:

փրփրադեզ,
Իր նոր հունում
Պտույտ բերեց
Ելեքտրական
Անիվ, փոկ, շին
Յե՛վ կայծատու,
Յե՛վ լուսարձակ
Գիգանտ մաշին.
Յերկրի վրա
Աստղեր վառեց,
Լույս, եներգյա
Բերեց հանդես:



Լո՛ւյս, եներգյա,
Թափ հաղորդեց

ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ
Կոմբինատին,
Լո՛ւյս, եներգյա
Թափ հաղորդեց

Ղ Ա Ր Ա Ք Լ Ի Ս Ո Ւ
Նոր Քիմշինին:

---

Ահա այսպես
Բալշեվիկյան
Արագ տեմպով,
Աշխատանքով
Անդուլ, համառ



Հաղորդման գծի լարերի մոնտաժը:

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
Հիմքի համար
Ստեղծեցինք
ՁՈՐԱԳԵՏԻՑ
ԼՈՌ – ՁՈՐԱԳԵՍ,
Մեր նոր կեանքը
Թեվավորած
Թռցնում ենք
ՁՈՐԱԳԵՍԻ
Հոսանքի պես
Հին քաջքերի,
Հին դեվերի,
Ու քարացած
Աղաթների
Դեմ պայքարի:



*110.000 վոլտի բաց յենթակայանը:*

## ՁՈՐԱԳԷՍԻ ՅԵՐԳԸ

8879-56

Гос. Библиотека



« Բելե » վահանը:



1.

Լ ե ն գ ե ս ,
Ե ր գ ե ս ,
Քանաքեռգես
Ու մին էլ
Ց ե ս ՝
ԼՈՌ–ՁՈՐԱԳԵՍ ,
Կը միանան
Մի նոր կետում
Եսոր – եգուց
Ցեվ կը կազմեն
Ելեկտրոցանց ,
Ելեկտրական
Մի մեծ հանգույց :

Մենք չորս Գեսեր ,
Ավազ , կրտսեր ,
Կրտսեր , ավազ
Հարվածային
Ուժահաւաք
Թափով կտանք
Ալիք , հոսանք ,
Լույս , էներգյա
ԱԼԼԱՀՎԵՐԴՈՒ
Կոմբինատին :

ՂԱՐԱՔԻԼԻՍՈՒ
Նոր քիմշինին :

ԴԱՎԱԼՎԻՆ ԿԻՑ
Մեծ Ցիմշինին :




Ղեկավարման վահանը:

ՅԵՐԿԱԹԳԾԻ

Տրանսպորտին:

ԼԵՆԻՆԱԿԱՆ —

Տեքստիլին:

ԱՐԹԻԿ–ՏՈՒՖԻՆ,

ԱՆԻ–ՊԵՄԶԻՆ:

Դեռ ավելին —

Աստղ ճակատին

Հինգթևվանի

Մայրաքաղաք

ՅԵՐԵՎԱՆԻ



*Ձորագես-Ղարաքիլիսա հաղորդման գիծը:*





*Ձորագես-Ղարաքիլիսա հաղորդման գիծը.*

Ֆաբրիկներին,

Զավոդներին,

Բոլոր, բոլոր

Հիմնարկներին

Ձեռնարկներին,

Տրամվային

Նորակառույց,

Մեր մեծ ուժին

Նոր ապացույց:

Հողին կրտանք

Պարարտանյութ.

Հողին սնունդ,

Հողից ծնունդ:



*Ղարաքիլիսայի յենթակայանի բաց տեսքը:*

Կովխոզներին,
Սովխոզներին,
Տրակտորներ,
Նոր գութաններ,
Շարժացաններ,
Վարող, ցանող
Մեքենաներ
Ու կոմբայներ,
Հնձող, կալսող.
Հատիկները
Տոպրակ ածող,
Բերանները
Կարող, կապող
Մի կողմ դարսող:



Յերկրին կտանք
Ջրաղացներ
Առանց ջրի —
Հացի փուռեր,
Վառարաններ,
Խոհանոցներ,
Տաք բաղնիսներ,
Տան լամպաներ:

Առանց փայտի
Առանց նավթի,
Առանց մրի.

Յերկրին կտանք
Առանց թխսի,
Առանց մխսի,
Ջվերից նուտ,



*Ղարաքիլիսայի յենթակայանը. բաց յենթակայանի առաջին շարք հենարանները:*

Առանց կրծքի
Մենք կը կթենք
Կովի կրծքից
Կաթը պուտ-պուտ:

Ճահիճների
Ձոր-չորացում,
Ջավողների
Նոր կառուցում:

Ջուր ու քամի
Մեկ կը լծենք
Նրանցից ուժ
Մենք կը գանձենք:


*Ղարաքիլիսայի ուժ պակասացնող տրանս-ֆորմատորը:*

Բոմբ, դինամիտ,
Պատրույգ, վառոդ
Լաղում, պեղում,
Թոնել, ջրանցք,
Արաքսից ջուր
ՍԱՐԴԱՐԱԲԱՏ
Անապատին …

Անապատում
Քաղաք, գավող ․․
Շուրջը անտառ,
Ծառ ու ծմակ
Պարտեզ, այգի,
Շուրջը տափեր
ԲԱՄԲԱԿԱՏՈՒ,
ԲԱՄԲԱԿԱԲԵՐ:



2.

Եդ դեռ չորսով,
Դեռ չորս Գեսով.
Հանդես կը գանք
Յեվ տասչորսով,
Հարյուր չորսով
Գիգանտ Գեսեր
Ավագ, կրտսեր:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ց
Յ ե ս —
ՁՈՐԱԳԵՍ,
ԼԵՆԳԵՍ,
ԵՐԳԵՍ,
ՔԱՆԱՔԵՌԳԵՍ,


*Ճարտարապետ Բելաուսով եւ նրա օգնականը*

ՔԱՂՍ-ԳՅՈՒՄՈՒՇԳԵՍ,
Ձորս Գեսերով
Յեվ վիթխարի
ՄԵԾ ՍԵՎԱՆԳԵՍ:

Վ Ր Ա Ս Տ Ա Ն Ի Ց
ՁԱԳԵՍ,
ԱՁԳԵՍ,
ԱԲԳԵՍ,
ՌԵՆԳԵՍ,
ԱԼԱՁԱՆԳԵՍ
Յեվ ԽՐԱՄԳԵՍ:
Ա Դ Ր Բ Ե Ջ Ա Ն Ի Ց

ԹԱՐԹԱՌԳԵՍ,
ԿԱՐԱՍԱԽԿԱԼԳԵՍ,
ՋՈՒՐՆԱԲԱՏԳԵՍ:



*Քանաքեռգեսի շենքը:*



Եվ ի՞նչ թվեմ·
Յեղբայրական
Յերեք յերկրում
Վորքան մեծ գետ,
Այնքան էլ Գես:

Կը միանանք —
Սերտ միացում
Ելեքտրական
Եվ ավելի
Մեծ հանգույցում
Հազար, հազար
Ձիան ուժով:

Գեսահավաք,
Լուսահավաք,
Ուժահավաք
Յերեք յերկրի
Ազգերի պես
Յերեք յերկրի
Յեվ Գեսերս
Կը կազմենք կուռ,
Մի ամրակուռ
ՖԵԴԵՐԱՑԻԱ՜ ...
ՖԵԴԵՐԱՑԻԱ՜ ...
Լույսի, ուժի
ԵԼԵՔՏՐՈՖԻԿԱՑԻԱ՜...
ԵԼԵՔՏՐՈՖԻԿԱՑԻԱ՜...



*Քանաքեռգեսի բաց կայանը եւ խողովակատարը:*

Դերաշխուժով
Մենք գրկախառ,
Գերաշխուժով
Մենք խանդավառ,
Մեր լարերով
Գղրնձաձուլ,
Գղրնձահյուս
Կ'յերգենք յերգը,
Մեր յերգն անմար:

« Յոլդաշ ՀԱՍԱՆ,
Ընկեր ԹԵՎԱՆ,
Ամխանագո,
Ե'յ, տավարիշչ
ԴԱՐՁՈ, ԻՎԱՆ,
Հոգով մեկ ենք,
Շահով մեկ ենք,
Թշնամու դեմ
Մահով մեկ ենք »:



—Քանաքեռգեսի խողովակաշարը:





Յերևանի հիդրոկայանը:



Ու սոցմրցում ...
Ու հաղթարշավ,
Գերալացում,
Գերտեղաշարժ
Դեպ ուղեկից
Յեղբայրական
Ֆեդերատիվ
ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ,
ՆՈՐ ՎՐԱՍՏԱՆ,
ՆԱՎԹԱՇՐՋԱՆ —
ԱԴՐԲԵՋԱՆ,
Ֆեդերատիվ
Յերեք յերկիր՝
ԱՆԴՐԿՈՎԿԱՍ,
Խորհրդային
ՄԵԾ ՄԻՈՒԹՅԱՆ
Մի յերկրամաս:



*Ձորագետում աշխատող հարվածային բանվորներ:*

ԱՆԴՐԿՈՎԿԱՍ՝
ՄԵԾ ՄԻՈՒԹՅԱՆ
Անբաժան մաս:

Թռչենք ոդը,
Իջնենք յերկիր,
Գետնի խորքեր՝
Ածխահանքեր,
Մութ շախտաներ,
Նավթահորեր,
Անտառ, քարհանք
Յերբեմն անջուր,
Յերբեմն անկյանք:
Այրված, խանձված
Յեվ աղանձված
Ձոր անապատ



Դաշտեր՝ ՄՈՒՂԱՆ,
ՍԱՐԴԱՐԱԲԱՏ:

Մինչեվ հիմա
Անկարելին
ԱՆՉԱՓԵԼԻՆ
Անձեվելին
Ջափենք, ձեվենք,
Ձեվավորենք,
Նյութով,
Հյութով
Թեվավորենք:

Մինչեվ հիմա
Կենտրոնախույս
Յեվ անհասը
Յեվ չհասը
Մենք դարձնենք հաս.

Հալենք,
Ձուլենք,
Կաղապարենք.
Մտքով,
Կամքով
Գաղափարենք:
Սոցիալական
Հեղաշրջում ...
Կուլտուրական
Հեղաշրջում:

Ելեքտրական
Ուժի տեմպով
ԱՌԱՋՆՈՐԴԻ,
ՄԵԾ ՈՒՍՈՒՑՉԻ,
ՄԵԾ ԻԼԻՉԻ
ԳԾԱԾ ՃԱՄԲՈՎ:

( Վ ե ր ջ )



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ–Арм. ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

IMPRIMERIE DU GLOBE PARIS

ՀՀ Ազգային գրադարան
NL0333727

34711